

---

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ– XIX դ.), հ. 1, Երևան, «Զանգակ–97», 2006, 140 էջ:

Ամեն բառ մի աշխարհ է, ուրեմն բառարաններն էլ այդ աշխարհների քարտեզներն են, որոնք մեր առջև բացում են դրանց հայտնի ու անհայտ կողմերը, երևան հանում նորանոր սքանչելիքներ: Եվ, իրոք, լեզվի բառապաշարի ուսումնասիրությունը ոչ միայն լեզվական-տեսական խնդիր է, այլև դրա միջոցով բացահայտվում են ժողովրդի պատմությունն իր վայրիվերումներով, կենցաղը, մշակույթը, սովորությունները և այլն: Հայ ժողովուրդը և՛ հարուստ պատմություն ունի, և՛ հարուստ բառապաշար, և՛ հարուստ բառարանագրություն: Բառարաններն այնքան շատ ու բազմազան են, որ նույնիսկ դրանց քննությանը վերաբերող բազմաթիվ արժեքավոր աշխատությունների ստեղծվելուց հետո էլ մնում են չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված: Այդպիսի բառարանների քննությանն է նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Համբարձումյանի «Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ – XIX դ.)» մենագրությունը: Հայ բառարանագրությանը նվիրված յուրաքանչյուր արժեքավոր աշխատություն հետաքրքրական է մասնագետների և, ինչու չէ, նաև ոչ մասնագետի համար, և սույն գրքում քննության առնված քիչ կամ գրեթե չուսումնասիրված փոքրածավալ բառարանների ծավալը, սակայն, չի պակասեցնում դրանց արժեքը: Ընդհակառակը, ինչպես նշում է հեղինակը, «...հայերեն ծավալուն բառարանների լեզվական իրողությունների հիմնական մասը կրկնվում է և փոխանցվում բառարանից բառարան: Իսկ ոչ ծավալուն բառարանների շատ իրողություններ այդպես էլ տեղ չեն գտել հայերեն ընդարձակ բառարաններում՝ առհասարակ: Ծավալուն բառարանների հեղինակները թերևս չեն ունեցել լայն հնարավորություն, որպեսզի

ընդգրկեին հայերեն գրավոր հուշարձանների մեջ տեղ գտած ողջ բառագանձը, այլև տարբեր ձեռագրերում ամփոփված, մատենակից բառարանների լեզվական տվյալները» (էջ 24): Այսպիսով՝ վերը նշված մենագրության մեջ ներկայացված ու վերլուծված են արժեքավոր, բայց ոչ հայտնի բառարաններ: Ի դեպ, հայ բառարանագրությանը և տարբեր բառարանների Վ. Համբարձումյանն անդրադարձել է իր մի շարք հոդվածներով, իսկ այս գիրքն ամբողջացնում է գիտական այդ ուսումնասիրությունները:

Աշխատության սկզբում հեղինակը խոսել է բառարանագիտությանը վերաբերող տեսական խնդիրների, ինչպես նաև լեզվաբանական (բանասիրական) և հանրագիտական բառարանների առանձնահատկությունների մասին, համառոտ ներկայացրել հայ բառարանագրության ավանդները, վերլուծել Ստ. Մալխասյանցի, Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի և այլոց տեսակետները: Նա իրավացիորեն պաշտպանում է Էդ. Աղայանի այն կարծիքը, որ հստակ պետք է տարբերակել բառարանագրությունը և բառարանագիտությունը, հետևաբար նաև բառարանագրին ու բառարանագետին:

Ներածական հատվածին հաջորդում են հետևյալ մասերը՝ «Արիստակես Համադանեցու վանկաբառարանը», «Հայերեն-լատիներեն ձեռագիր բառարանը», «Հայերեն ձեռագիր բառակազմական բառարանը», «Գլեոպատրա Մարաֆյանի «Բանալի գիտութեան» գիրքն իբրև բառարանագրական աշխատանք», «Գրիգոր Խալդարյանը բառարանագիր», «Եղիազար Առնջեցու մատենակից բառարանները»: Վերջում գետեղված է աշխատանքում իբրև օրինակ բերված այն բառերի ցանկը, որոնք չկան «Նոր հայկազյան բառարանում»: Սա էապես բարձրացնում է գրքի

գործնական արժեքը: Այդ բառացանկում կան շատ բառեր, որոնք, թվում է, անպայման պետք է լինեին մի այնպիսի ընդգրկուն ու ստվարածավալ բառարանում, ինչպիսին է «Նոր հայկազյան բառարանը», օրինակ՝ անելի, արդարավճիռ, երգասաց, ժամասաց, ինքնահավան, խաղասաց, հոգոց հանել, ճշտություն, մաշիկ, միավանկ և այլն: Այսպիսի բառացանկերը կարևոր հավելումներ են և մեծապես հեշտացնում են հետագա բառարանագիրների աշխատանքը:

Ինչպես նշվել է, քննված բառարանները հիմնականում անձանթ, քիչ ուսումնասիրված են: Թերևս դրանցից առավել հայտնի է Կլեոպատրա Սարաֆյանի աշխատությունը, սակայն այս բաժինն էլ սոսկ ծանոթ նյութի կրկնություն չէ և ուշագրավ է նրանով, որ ներկայացվում են մանրամասներ Կ. Սարաֆյանի կենսագրության, գրքի տպագրության վերաբերյալ, որոնք շատ հետաքրքիր են և մեկ անգամ ևս հաստատում են հայ մարդու մայրենի լեզվին, գրին ու գրականության նվիրված լինելը: Կարծում ենք, որ այն կգրավի ոչ միայն մասնագետների, այլև տարբեր մասնագիտությունների տեր ընթերցողներին, որոնք նոր փաստեր կիմանան իրենց ազգի պատմության ու մշակույթի մասին:

Գրքում բառարանները քննված ու արժևորված են տարբեր չափանիշներով: Օրինակ՝ Արիստակես Համադանեցու վանկաբառարանը, որն ընդամենը 11 էջ է, Վ. Համբարձումյանը կարևորում է ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև գործնական-ուսուցողական, քանի որ հեղինակը հենց այդ նպատակով է կազմել այն:

Անշուշտ, գիտական ցանկացած լուրջ վերլուծություն պետք է վեր հանի նաև ուսումնասիրվող նյութի թերություններն ու բացթողումները, և քննվող բառարանները ներկայացվում են իրենց բացասական կողմերով ևս, որոնք հիմնականում վրիպումներ են կամ անհետևողականությ-

յան հետևանք: Սակայն ուսումնասիրողի համար դրանք երբեմն լուրջ խոչընդոտներ են ստեղծում, ուստի էապես կարևորվում է եղած սխալների, երկիմաստությունների, անհասկանալի բացատրությունների ճիշտ մեկնաբանությունը:

«Ակնարկներ հայ բառարանագրության պատմության» գիրքը կարդալով՝ ծանոթանում ենք ոչ միայն XVII–XIX դդ. հայ բառարանագրության պատմությանը, այլև շատ մանրամասներ ենք իմանում այդ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, հայ գաղթօջախների, հայ ժողովրդի վիճակի մասին: Բառարանների տպագրությունը դուրսին չի եղել, դրան աջակցել են հայրենասեր ու ազգասեր մարդիկ, և տեղեկանալով նրանց կատարած գործերին՝ պատկերացում ենք ունենում ժամանակաշրջանի վերաբերյալ: Անհնար է առանց հուզումի կարդալ Գրիգոր Խալիբարյանի գործունեության մասին, տեղեկանալ, որ նա իր հարստությունը ծախսել է տպագրական գործը զարգացնելու նպատակով և պարտքերի բեռան տակ հեռացել կյանքից, սակայն սերունդներին թողել Ռուսական կայսրության սահմաններում (Պետերբուրգում) հիմնված հայկական առաջին տպարանը (1781 թ.):

Այսպիսով՝ մի կողմից բառարանները՝ որպես հասարակական կյանքն արտացոլող յուրօրինակ հայելիներ, մյուս կողմից դրանց ստեղծման պատմությունները բացում են հայ ժողովրդի անցած ուղու դժվարին շատ էջեր, բայց նաև հաղորդում են հպարտության զգացում, որ ծանր ու անբարենպաստ պայմաններում էլ հայը մնացել է գիր ու գրականություն սիրող և ոչ միայն չի ընկճվել, այլև ստեղծել է ուշագրավ նորանոր բառարաններ: Այդ ամենը հետաքրքիր ու գրավիչ ձևով ներկայացված է Վ. Համբարձումյանի «Ակնարկներ հայ բառարանագրության պատմություն» (XVII դ. վերջ – XIX դ.) գրքում (հատոր 1), որի հաջորդ հատորի տպագրությունը, հուսով ենք, շատ չի ուշանա: